

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
Երևանի պետական համալսարանի  
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2024 թ. մարտի 27-ին կայացած թիվ 11 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թ. մարտի 27-ին կայացած թիվ 11 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 24-ը: Նախագահողը քվեարկության դրեց օրակարգը և այն միաձայն հաստատվեց:

**Օրակարգ՝**

1. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Անուշ Մարտինի Բաբայանի՝ ատենախոսության թեմայի վերահաստատման, գիտական ղեկավարի և դասիչի փոփոխության հարցը:
2. ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Դմիտրի Բվանի Գրաչևի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
3. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետում գործող մագիստրոսական կրթական ծրագրերի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների թեզերի երկրորդ ղեկավարների հաստատման հարցը:
4. ԵՊՀ «Կենսաբանություն» ԳՀԻ կողմից առաջին անգամ կազմակերպված երկօրյա հաշվետու գիտաժողովի արդյունքների քննարկման հարցը:
5. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում մարտի 15-ին և մարտի 22-ին իրականացվող դպրոցականների ճանաչողական այցի արդյունքների ներկայացում:
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Անուշ Մարտինի Բաբայանի՝ ատենախոսության թեմայի վերահաստատման, գիտական ղեկավարի և դասիչի փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Ա.Ա. Փոլադյանը, «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կ. Ա. Թռչունյանը: Կարեն Թռչունյանը ներկայացրեց փաստարկներ հայցորդ Անուշ Մարտինի Բաբայանի ատենախոսության թեմայի վերնագիրը փոխելու անհրաժեշտության վերաբերյալ: Ղեկավարի կողմից առաջարկվեց «*Origanum vulgare L.* և *Ocimum basilicum var. purpureum* բույսերից անջատված միացությունների կենսաբանական ակտիվությունն ու ազդեցության մեխանիզմները» վերնագիր, որն ընդունվեց գիտխորհրդի անդամների կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝ վերահաստատել Անուշ Մարտինի Բարայանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «*Origanum vulgare* L. և *Ocimum basilicum* var. *purpureum* բույսերից անջատված միացությունների կենսաբանական ակտիվությունն ու ազդեցության մեխանիզմները», Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել պրոֆեսոր, կ.գ.դ. Կ. Ա. Թոշունյանին:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Դմիտրի Իվանի Գրաչևի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը: Հիմք ընդունելով ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի նիստի քաղվածքը, ներկայացվեց Դմիտրի Իվանի Գրաչևի ատենախոսության թեման «Հեմային և ոչ հեմային երկաթի նիտրոզիլային համալիրների փոխազդեցությունը թթվածնի և ազոտի ակտիվ ձևերի հետ» և որպես գիտական ղեկավար առաջարկվեց ֆիզմաթ. գիտ. դոկտոր Եվգենի Շամիրի Սամասխիսովի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Դմիտրի Իվանի Գրաչևի թեկնածուական ատենախոսության թեման «Հեմային և ոչ հեմային երկաթի նիտրոզիլային համալիրների փոխազդեցությունը թթվածնի և ազոտի ակտիվ ձևերի հետ», Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար հաստատել ֆիզմաթ. գիտ. դոկտոր Եվգենի Շամիրի Սամասխիսովին:

3. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետում գործող մագիստրոսական կրթական ծրագրերի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների թեզերի համադեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Պողոս Վարդևանյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Ա.Ա. Փոլադյանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը: Ելույթների ժամանակ նշվեց, որ մագիստրոսական թեզերի փորձարարական հատվածի որոշակի ծավալ կատարվում է ինստիտուտների լաբորատորիաներում, իսկ համադեկավարները այդ ինստիտուտների աշխատակիցներ են, նպատակահարմար է ներգրավել նաև նրանց:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի ղեկավարների կարծիքները հաստատել առաջարկվող համադեկավարներին:

Ստորև ներկայացված են մագիստրոսական կրթական ծրագրերում սովորող ուսանողների և համադեկավարների վերաբերյալ տեղեկատվություն:

1. «Կենսաֆիզիկա» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Սոնյա Ռոմայի Աբրահամյան, ղեկավար՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Պողոս Վարդևանյան, երկրորդ ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի կենսաբանական գործընթացների համակարգչային մոդելավորման լաբորատորիայի ղեկավար, կ.գ.դ. Կարեն Բաբկենի Նազարյան: Մագիստրոսական թեզի վերնագիր՝ «14-3-3-ի և SARS-Cov-2 նուկլեոկապսիդ սպիտակուցի համալիրի մոդուլյատորների in silico սկրինինգ»:
2. «Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Եզոբի Աղաբեկյան, ղեկավար՝ ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Իրեն Շահազիզյան, երկրորդ ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ այլընտրանքային էներգիայի աղբյուրների լաբորատորիայի գիտաշխատող կ.գ.թ. Բաղիշ Աշոտի Հարությունյան: Մագիստրոսական թեզի վերնագիր՝ «Ցիանոբակտերիաներից և միկրոզոոիտներից գլիկոգլիցերոլիպիդների անջատումը և հակաքաղցկեղային ազդեցության ուսումնասիրությունը»:
3. «Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա» մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Նաիրա Վաղինակի Սարգսյան, ղեկավար՝ ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Էմմա Գևորգյան, երկրորդ ղեկավար՝ Լ. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի զգայաշարժ ինտեգրացիայի լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Լիլիթ Դարբինյան: Մագիստրոսական թեզի վերնագիր՝ «Քրքումի նյարդապաշտպանիչ ազդեցության ուսումնասիրությունը Պարկինսոնի հիվանդության պայմաններում»:
4. «Շնչառություն և բժշկական կենսաքիմիա» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Լիլիթ Լևոնի Պետրոսյան, ղեկավար՝ ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Սեդա Վիկտորի Մարության, երկրորդ ղեկավար՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կոնստանտին Ենկոյան: Մագիստրոսական թեզի վերնագիր՝ «Նեյրոնային վնասման վաղ նշաններ 1-42 բետա ամիլոիդով և ՖԱԲ մակաձված Ալցհեյմերի հիվանդության կենդանական մոդելներում»:
5. «Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Լիլիթ Վիկտորի Դավաթյան, ղեկավար՝ ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Նաիրա Ժորայի Սահակյան, երկրորդ ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի բույսերի գենոմիկայի խմբի ղեկավար, կ.գ.թ. Քրիստինե Սերգեյի Սարգսյան: Մագիստրոսական թեզի

վերնագիր՝ «Խաղողի VvMyBA1 գենի ալելային բազմաձևության գնահատումը և երկրորդային մետաբոլիտների քանակական վերլուծությունը»:

4. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ «Կենսաբանություն» ԳՀԻ կողմից առաջին անգամ կազմակերպված երկօրյա հաշվետու գիտաժողովի արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ԵՊՀ «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, կ.գ.դ., պրոֆեսոր Կարեն Թոշունյանը: Ելույթի ժամանակ նշվեց, որ այս տարի առաջին անգամ անցկացվեց նման ձևաչափով երկօրյա հաշվետու գիտաժողով, որի շրջանակում գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատողները և դասախոսները հանդես եկան զեկուցումներով: Նշվեց, որ հաճախակի անցկացնելով նմանօրինակ բազմաբովանդակ քննարկումներ և սեմինարներ կարելի է ակտիվացնել գիտական կյանքը: Գիտական միջոցառումները չափազանց կարևոր են, քանի որ դրանք գիտնականների համար լավ հնարավորություն են ծանոթանալու ոլորտում կատարվող գիտական հետազոտություններին, ինչպես նաև առկա հնարավորությունները նպատակային օգտագործելու տեսանկյունից: Նշվեց նաև, որ այս տիպի միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ, սակայն հնարավոր է ձևաչափի փոփոխություն: Նման կազմակերպչական հարցերը նախապես կքննարկվեն:

Նշվեց նաև, որ ս.թ. ապրիլի 10-ին, 12-ին և 15-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում նախատեսվում է անցկացնել «Հաշվետու գիտաժողով-2024» գիտական միջոցառումը, որի նպատակն է ամփոփել ԵՊՀ գիտական ստորաբաժանումների գործունեությունը, լսել ոլորտի առաջատար գիտնականներին, որոնք ներկայացնելու իրենց գիտական հետազոտությունների արդյունքները, ծանոթանալ ստորաբաժանումների գործունեության նորագույն ուղղություններին: Միջոցառումը հնարավորություն կտա պատկերացում ունենալ հարակից ոլորտների գիտահետազոտական առաջընթացի վերաբերյալ, կնպաստի խորացնելու և ընդլայնելու գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների և ֆակուլտետների գիտական համագործակցությունը:

5. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում մարտի 15-ին և մարտի 22-ին իրականացվող դպրոցականների ճանաչողական այցի արդյունքների վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի դեկավար-դեկանի տեղակալ, կ.գ.թ., դոցենտ Իրեն Շահագիզյանը: Ներկայվեց տեղեկատվություն Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում մարտի 15-ին և 22-ին տեղի ունեցած ճանաչողական այցերի մասին, որոնք նախատեսված էին ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ ՀՀ մարզերի միջնակարգ և ավագ դպրոցների աշակերտների համար: Նշվեց, որ 2 օրերի ընթացքում ֆակուլտետ այցելել են 76 դպրոցների 1054 աշակերտ: Մարտի 15-ին՝ 312, իսկ մարտի 22-ին՝ 742 աշակերտ:

Երևան քաղաքի 36 դպրոցներից այցելել են 475, իսկ մարզերի 40 դպրոցներից՝ 579 աշակերտ: Մարզային դպրոցների աշակերտների գերակշռող մասը Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի դպրոցներից էին: Արարատի մարզի 14 դպրոցներից այցին մասնակցել է 245, Արմավիրի մարզի 11 դպրոցներից 134, Կոտայքի մարզի 6 դպրոցներից 123, Շիրակի մարզի 1 դպրոցի 33, Գեղարքունիկի մարզի 1 դպրոցի 20, Վայոց Ձորի մարզի 2 դպրոցների 12, Արագածոտնի մարզի 2 դպրոցի 5, Լոռու մարզի 1 դպրոցի 4, Տավուշի մարզի 1 դպրոցի 2 և Սյունիքի մարզի 1 դպրոցի 1 աշակերտներ:

Նշվեց այն մասին, որ նման միջոցառումները կրելով շարունակական բնույթ, հնարավորություն կտան հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտներին ծանոթանալ կենսաբանության ֆակուլտետի կառուցվածքի, կրթական ծրագրերի, ընդունելության կարգի հետ, ստանալ համապատասխան մասնագիտական և հետագա աշխատանքային հեռանկարների վերաբերյալ տեղեկատվություն: Ստացած մասնագիտական խորհուրդները կնպաստեն և կօգնեն դպրոցականների ապագա մասնագիտական կողմորոշման հարցում:

Կենսաբանության ֆակուլտետի դեկան Կարեն Ղազարյանը իր ելույթում փաստեց, որ աշակերտների այցի ժամանակ մեծ օգնություն են ցուցաբերել ֆակուլտետի ՈՒԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչները, որոնք համակարգում էին աշակերտական խմբերի այցելությունները ամբիոններ և գնահատելով նրանց կողմից կատարած աշխատանքը պարգևատրեց 23 ուսանողներին շնորհակալագրերով:

Շնորհակալագրեր են ստացել կենսաբանության ֆակուլտետի ՈՒԽ անդամներ՝ Ռուզաննա Հարությունյան, Արմինե Վարդանյան, Էլեն Վարդանյան, Լարիսա Նավասարդյան, Աննա Հովհաննիսյան, Վարս Կիրակոսյան, Վան Բաղյան, Հայկ Սարգսյան, Սոֆյա Մանուկյան, Աստղիկ Նարինյան, Անի Մարիբեկյան, Նաթելա Թարգյան, Ստելլա Հակոբյան և ՈՒԳԸ անդամներ՝ Նարե Դարբինյան, Ռիմա Գևորգյան, Սոնա Սարգսյան, Սրբուհի Վարդանյան, Մարիամ Պապիկյան, Մարի Գասպարյան, Տաթևիկ Բաղդասյան, Դիանա Դարբինյան, Սմբատ Մաղաքյան, Լիլիթ Իսկանդարյան:

6. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանին Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ /բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/, թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու հարցը:


ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Ն. Վ. Ավթանդիլյանի փորձն ու գիտական գործունեության ծավալը (գիտական հոդված՝ 33, թեզիս՝ 25, գիտական ծրագրեր՝ 8, որից 6-ում հանդես է եկել որպես ղեկավար)՝ և ամբիոնի կարծիքը, միջնորդել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին թույլատրելու Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանին Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ

/բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/, թեկնածուական  
ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու համար:

Գիտական խորհրդի նիստի ժամանակ քննարկվեցին նաև հարցեր ուղղված  
մանկավարժական և գիտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը,  
մասնավորապես լսեցին ղեկանի հաղորդումը ուսանողների անհարգելի  
բացակայությունների թվի և տրվող նկատողությունների վերաբերյալ:

Գիտական խորհրդի նիստի ավարտին ելույթ ունեցավ բուսաբանության և  
սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Գ. Նանագյուլյանը:  
Նա փոխանցեց նույն ամբիոնի պատվավոր վարիչ, ակադեմիկոս Լիա Լևոնի  
Օսիպյանի խոսքը, ով առանձնացրել էր որոշակի փաստեր, որոնք կնպաստեն  
կենսաբանության ֆակուլտետի ուսումնական, գիտական գործունեության  
արդյունավետության բարձրացմանը, կխթանեն նրա առաջընթացը և կապահովեն  
մրցունակությունը գիտակրթական ասպարեզում:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ  Գ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ  Ի.Վ. Շահազիզյան

